

ՀՐԱՄԱՆ

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ, 50-րդ և 51-րդ հոդվածները,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ`

1. Հաստատել «ՀայՓոստ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Ընկերություն) Գնումների գործընթացի կազմակերպման կարգը՝ համաձայն սույն հրամանին կից Հավելված 1-ի.
2. Հաստատել Գնումների գործընթացներում ներգրավված Ընկերության հիմնական պատասխանատու ստորաբաժանումների ցանկը՝ համաձայն սույն հրամանին կից Հավելված 2-ի.
3. Սահմանել, որ Գնումների գործընթացի իրականացման կարգի համաձայն Գնումների համակարգող կարող է հանդիսանալ Ընկերության գնումների վարչության պետը կամ վարչության այլ աշխատակից:
4. Գնումների վարչության պետ Նելլի Իսախանյան՝ սույն հրամանը հաստատվելուց հետո 10-օրյա ժամկետում Գնումների գործընթացի կազմակերպման կարգը (կարգի համապատասխան մասերը) Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն հրապարակել ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում և «ՀայՓոստ» ՓԲԸ ինտերնետային կայքում.
5. Մարդկային ռեսուրսների վարչությանը՝ ապահովել սույն հրամանի իրագեկումը Ընկերության աշխատակիցներին:
6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում համապատասխան ստորաբաժանումներին և աշխատակիցներին պատշաճ կարգով իրագեկելու պահից:

Գլխավոր գործադիր

տնօրենի պաշտոնակատար

„-----„մայիսի 2011թ.

թիվ-----Լ

ք.Երևան

Հ. Ավագյան